Հավելված N 11
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481– Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջազգային համագործակցության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կանոնադրության, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի (այսուհետ՝ Նախարար) և նախարարության գլխավոր քարտուղարի հրամաններին, ինչպես նաև սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

3. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր առջև դրված խնդիրների և գործառույթների ժամանակին ու պատշաճ իրականացման համար:

4. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման բնագավառում Վարչության խնդիրներն են՝

1) արդյունավետ միջազգային տնտեսական կապերի հաստատումը, զարգացումն ու ընդլայնումը,

2) իր իրավասության սահմաններում միջազգային տնտեսական համագործակցության համար համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) համակարգում և իրականացնում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության աշխատանքները,

2) նախապատրաստում, կազմակերպում և համակարգում է Նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների կողմից օտարերկրյա գործընկերների հետ իրականացվող աշխատանքները.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների հետ Նախարարության պաշտոնական կապը,

4) նախապատրաստում և կազմակերպում է Նախարարության կողմից համակարգվող առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների ու երկկողմ և բազմակողմ աշխատանքային խմբերի նիստերի անցկացումը: Իրականացնում է դրանց արդյունքում ընդունված որոշումների կատարման մշտադիտանցում,

5) համակարգում է Հայաստանի Հանրապետության այլ գերատեսչությունների կողմից համակարգվող առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների և երկկողմ ու բազմակողմ աշխատանքային խմբերի նիստերին նախարարության ստորաբաժանումների մասնակցությունը և իրականացնում է դրանց արդյունքում ընդունված որոշումների կատարման դիտանցում,

6) հավաքում, ամփոփում և Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ու Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն է ներկայացնում տեղեկանքներ/տեղեկատվական փաթեթներ ըստ առանձին երկրների,

7) կազմակերպում և համակարգում է նախարարության ներկայացուցիչների մասնակցությունը միջազգային համաժողովներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին,

8) համակարգում է արտերկրում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչների գործունեությունը,

9) Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչների հետ համատեղ ուսումնասիրում է արտաքին շուկաները, ներկայացնում է առաջարկություններ արտահանման խթանման վերաբերյալ,

10) մշակում է առևտրատնտեսական և գիտատեխնիկական ոլորտներին առնչվող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքվող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի նախագծեր, մասնակցում է բանակցային գործընթացներին, կատարում է տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող միջազգային պայմանագրերի նախագծերի փորձաքննություն:

11) իրականացնում է Սևծովյան Տնտեսական Համագործակցության Կազմակերպության (ՍԾՏՀ), ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության (ՃՄՀԳ) և այլ կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքները,

12) մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների (ներկայացուցչությունների) հետ համատեղ նախապատրաստվող այցերի ծրագրերի մշակմանը,

13) մասնակցում է Նախարարի, Նախարարի տեղակալների գլխավորած պատվիրակությունների օտարերկրյա պետությունների այցերի

նախապատրաստական, ինչպես նաև պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպման աշխատանքներին,

14) նախապատրաստում է Նախարարության ղեկավար կազմի հանդիպումները արտասահմանյան բարձրաստիճան պաշտոնյաների հետ, իրականացնում է այդ հանդիպումների արարողակարգային ապահովումը,

15) նախապատրաստում և կազմակերպում է նախարարության ղեկավար կազմի արտասահմանյան գործուղումները,

16) կազմակերպում և իրականացնում է արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունը:

IV . ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչության կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

8. Վարչությունը՝

1) իր իրավասության շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, ներկայացնում է հաստատման Վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը:

9. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը.

2) պատասխանատու է Վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, Վարչությունում

աշխատակիցների միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար.

3) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը.

4) անմիջական հաշվետու է Նախարարին: